

# Երկու խոսք

Որևէ ժողովրդի հոգևոր մշակույթի զարգացման ընթացքը առավել կամ նվազ չափով առնչվում է հարևան , ինչպես և հեռավոր ժողովուրդների մշակույթի ընդհանուր զարգացմանը: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում , հասարակական ու քաղաքական տարբեր պայմաններում այդ առնչություններն ուրույն դրսևորում և բնույթ են ունենում. դրանք մերթ հանդես են գալիս որպես ժամանակաշրջանին բնորոշ ընդհանուր երևույթներ և ուղղություններ, մերթ որպես մի մշակույթի անմիջական ազդեցություն մյուսի վրա, մերթ սոսկ փոխառություններ և այլն:

Չայ և պարսիկ ժողովուրդների պատմական, մշակութային, տնտեսական և քաղաքական կապերը իրենց արմատներով գնում են դարերի խորքը: Այդ կապերը առաջին հերթին պայմանավորված են այս երկու ժողովուրդների պատմական հայրենիքների հարևանությամբ, գուցե և նրանց միևնույն ցեղի պատկանելությամբ, որը անշուշտ չէր կարող հազարամյակների ընթացքում չնպաստել այս դրացի ազգերի տնտեսական և հոգևոր-մշակութային շփումներին և փոխազդեցություններին:

Չայերի և պարսիկների միջև այս փոխհարաբերությունների մասին առաջին հավաստի տեղեկությունները մենք գտնում ենք Աքեմենյան Դարեհ I-ի թողած Բեսիթունի սեպագիր արձանագրությունում: Դարեր շարունակ գտնվելով Արևելքի և Արևմուտքի շահերի բախման կենտրոնում, Չայաստանը գերազանցապես ապրում էր Իրանի քաղաքական և մշակութային շահերով: Լինելով այդպիսին, հայերը կարողացել են հին իրանական ավանդույթները լավագույն կերպով պահպանել զուտ հայկական մշակույթի հետ միասին:

Անկասկած է, որ իրանագիտությունը առանց հայկական աղբյուրների ուսումնասիրությամբ, լինելու է թերի և ոչ բավարար: Այդ մասին հանգամանորեն արտահայտվել են Իրանի այնպիսի մշամավոր գիտնականներ, ինչպիսին է ակադեմիկոս Սաիդ Նաֆիսին: Նա հույժ կարևոր և անհրաժեշտ է համարում հայ պատմիչների գործերը մանավանդ հին իրանական պատմագրության և մշակույթի ուսումնասիրման համար<sup>1</sup>: Նա

նույնիսկ առաջարկում էր Թեհրանի համալսարանի պատմագիտության բարձրագույն դասընթացներում ներմուծել հայերեն լեզվի դասավանդումը<sup>2</sup>:

Նոյն կարծիքին եին նաև պրոֆեսորներ Մ.Թ. Մոսթաֆավին, Աբաս Մեհրինը, Էբրահիմ Փուր-Դավուդն ու այլ նշանավոր դեմքեր:

Հայ իրանագիտության ակունքները սկիզբ են առնում դարերի խորքից, նոր ժամանակների արևելագիտությանը մատուցելով փաստական և քննական այնպիսի հարուստ նյութ, որը մեծ ավանդ է Արևելքի վերաբերյալ մարդկության կուտակած գիտելիքների գանձարանում:

Ամենահին հայ պատմիչը Ագաթանգեղոսն(5-րդ դ.) է: Նրա «Հայոց Պատմությունը» և նրան հաջորդող համարյա բոլոր պատմիչների գործերը չափազանց կարևոր սկզբնաղբյուրներ են ինչպես Հայաստանի և հայ ժողովրդի, այնպես էլ Իրանի և իրանական ժողովուրդների պատմության համար: Այդ հրաշալի գործերի ամուր շղթան դարերի երկայնքով շարունակվել է մինչև մեր օրերը, կանգի ներկա հայ գիտաշխատողները մեծ ավանդ ունեն իրանագիտության ուսումնասիրություններում: Արդեն, բացի հիշված սկզբնաղբյուրներից, առկա են իրանագիտական հարյուրավոր հոդվածներ, ակնարկներ և մենագրություններ, որոնք լույս են տեսել և շարունակվում են լույս տեսնել հայ իրանագետներ-արևելագետների ջանքերով: Ամենահրաշալիին այն է, որ այդ հետազոտությունները գիտական ամենայն լրջությամբ շարունակվում են այնպիսի ճգնաժամային պայմաններում , որոնց մեջ ապրում է Հայաստան աշխարհը:

Ելնելով նշված իրական փաստերից, երկար տարիներ է, ինչ կարդում և լսում ենք Իրանի պարսիկ, ինչու չէ նաև հայ մտավորականության ցանկությունները՝ հայ իրանագիտական աշխատանքները պարսկերենի թարգմանելով լրացնել աղբյուրագիտական բացը Իրանի պատմության ուսումնասիրության գործում: Նաև հարկավոր է հայ ընթերցողին ներկայացնել իրանցի հայագետների գործերը հայոց պատմության և մշակույթի վերաբերյալ:

Երկար տարիների ջանքերի հետևանքով՝ հաջողեցինք 1998 թ. Թեհրանում հրատարակել «Ապագա» երկլեզու ամսագիրը, որը գնահատանքի արժանացավ թե՛ հայ , թե՛ պարսիկ գիտակից համայնքի կողմից: Մեկ ու կես տարի անց հաջողեցինք հրատարակել «Լույս» երկլեզու երկշաբաթաթերթը, ժողովրդական ավելի լայն խավերի համար, ուստի որոշոցինք «Ապագա»-ն դարձնելով եռամսյա հանդես՝ ավելի մասնագիտական հոդվածներ տպագրել նրա էջերում:

«Ապագա»-ն դիմելով Արևելքի ժողովուրդների, մասնավորապես հայ-իրանական հնագույն մշակույթներին, իր աչքերը հառել է այդ ժողովուրդների լուսավոր «ապագային»: Իրականում հանդեսի հետաքրքրությունների հիմնական առանցքը լինելու է Իրանն ու Հայաստանը, ընդ որում Իրան ասելով մենք հասկանում ենք ոչ միայն այսօր ընդունված աշխարհագրական-քաղաքական միավորը, այլև իրանական մշակութային ոլորտում գտնվող բոլոր երկրներն ու ժողովուրդները: Հայ մշակույթը ներառելու է հայաստանյան և ողջ սփյուռքահայ ոլորտները:

«Ապագա»-ի խմբագրությունը սիրով ընդունում է ընթերցողի առաջարկներն ու քննադատությունները և ուրախությամբ կընդառաջի հայագիտական-իրանագիտական հոդվածներին, որոնց իր հնարավորությունների սահմաններում տպագրելու է հանդեսի սուղ էջերում:

<sup>2</sup>-«Վերածնունդ», համար 2000, Թեհրան հուլիսի 15, 1948 թ.

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

### Դոցենտ Վլադիմիր Ալեքսանյան

Վերջին տասնամյակում մեր ժողովրդի հոգեւոր վերածննդի, գիտության ու մշակույթի զարգացման նոր ու աննախատիպ վերելք սկսվեց: Ժամանակի հրամայական պահանջն է՝ վերադառնալ ազգային արմատներին, հաղորդակցվել մեր ժողովրդի հնագույն շրջանի պատմությանը, մեր հավատին, կենդանություն տալ անցած տասնամյակների ընթացքում հանիրավի անուշադրության մատնված եւ լքյալ վիճակում գտնվող հայ ժողովրդի հոգեւոր կենտրոններին, հայոց եկեղեցիներին ու պատմաճարտարապետական կոթողներին, որոնք կարող են խնամքի եւ թե վերաշինումի: Այս ամենի հետ միաժամանակ պահանջ է զգացվում ներկայիս կրթական համակարգում հնարավորին չափ սովորողներին գիտելիքներ հաղորդել կրոնի, եկեղեցու, մասնավորապես հայոց կրոնի եւ Հայաստանյազ առաքելական եկեղեցու մասին, որին էլ նվիրված է սույն հոդվածը:

\*\*\*

Հայ առաքելական եկեղեցին քրիստոնեական հնագույն հոգեւոր կենտրոնն է, որը, ըստ ավանդության, հիմնադրվել է Քրիստոսի առաքյալների Թադեոսի եւ Բարդուղիմեոսի քարոզչությամբ, մեր թվարկության առաջին դարում, երբ քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան եւ երրորդ դարի վերջին տասնամյակում, մինչեւ 301 թվականը, տարածվել Հայաստանում եւ նույն թվականին էլ ընդունվել պաշտոնապես:

Հայաստանում քրիստոնեության տարածման եւ նրա պաշտոնական ճանաչման գործում հսկայական ջանքեր են գործադրել հայոց Տրդատ 3-րդ թագավորը եւ Գրիգոր Լուսավորիչը: Մեզանում քրիստոնեությունը պետական- պաշտոնական կրոն ընդունվելուց հետո 302 թվականին Գրիգոր Լուսավորիչը մեկնում է Կեսարիա, ուր եւ Կապադովկիայի մետրոպոլիտը նրան ձեռնադրում է որպես Հայոց եկեղեցու արքեպիսկոպոս: Դրանից հետո

Գրիգոր Լուսավորիչն ու նրա հաջորդները կրել են «Կաթողիկոս Յայոց Մեծաց» տիտղոսը, թեև մինչև 368 թվականը հայոց եկեղեցին կախման մեջ էր Կեսարիայի մետրոպոլիտենությունից: Այդ հանգամանքը հանգիստ չէր տալիս հայ պետական- քաղաքական եւ հոգեւոր գործիչներին, որոնք ամեն կերպ ձգտում էին մեր եկեղեցու անկախությանը: Եւ ահա Պապ թագավորի ջանքերով հայոց եկեղեցին «տիեզերեկան» եկեղեցուց անկախացավ՝ ձեռք է բերում ինքնուրույնություն: Դրան մեծապես նպաստում է 303 թվականին Էջմիածնի մայրաթոռ տաճարի կառուցումը՝ Վաղարշապատ մայրաքաղաքում: Այն հռչակվում է որպես Յայոց առաքելական եկեղեցու առաջնորդի՝ կաթողիկոսի գահանիստ, համայն հայության կրոնական կենտրոն: Էջմիածնի մայր տաճարի կառուցումը նաեւ նպաստում է հայ եկեղեցու դիրքերի ամրապնդմանը, նրա տիրույթների ընդլայնմանը: Դրան էլ իր հերթին նպաստում է 356 թվականին Աշտիշատում հրավիրված կրոնական ժողովը, որի որոշմամբ նոր վանքեր կառուցելու հետ մեկտեղ ավելացվում են եկեղեցական հողատիրությունները՝ դրանց կից ստեղծվում նաեւ սեփական տնտեսություններ: Աշտիշատի ժողովի որոշումը, ճիշտ է, դժգոհություններ է առաջացնում գյուղացիական զանգվածների մեջ, քանի որ նրանց հողաբաժինները կարճատևելու հետ մեկտեղ նրանք նաեւ պարտավոր էին տարբեր տեսակի բնամթերային հարկեր վճարել եկեղեցուն, որով հայ եկեղեցու համար գոյատևելու, վերանորոգումներ կատարելու, հոգեւոր խավին պահելու հնարավորություն էր ստեղծվում:

Այսուհանդերձ, հաշվի առնելով գյուղացիական խավերի դժգոհությունները, հայոց Արշակունիները, հատկապես Պապ թագավորը զգալի չափով սահմանափակում են հայ եկեղեցու հողային եւ հարկային իրավունքները, կրճատում նրա տիրույթները: Սակայն Արշակունիների անկումից հետո հայ առաքելական եկեղեցին, ի բարորություն հայոց հոգեւոր կյանքի վերածննդի եւ լուսավորության պատմական ինչպես նաեւ եկեղեցու դիրքերի ամրապնդման, շարունակում է պահպանել իր արտոնությունները՝ դրանով իսկ նպաստելով ժողովրդական զանգվածների եւ մասնավորապես նախարարական տների ջլատված ուժերի համախմբմանն ու միասնությանը:

Յայ առաքելական եկեղեցին նաեւ քաղաքական, օրենսդրական եւ մշակութային կյանքի հիմնական օղակն է եղել: Այդ է պատճառը, որ երկրի օրենսդրական «Աշխարհաժողովին» փոխարինելու է եկել «եկեղեցական ժողովը»՝ կաթողիկոսի գլխավորությամբ ու նրա ղեկավարությամբ: Այս ամենով, սակայն, հայ առաքելական եկեղեցու դերը եւ գործունեությունը չի սահմանափակվում. նա էր հովանավորում եւ ղեկավարում երկրի պաշտպանությունը, տնտեսական, վերելքի բոլոր ձեռնարկները, մեր ժողովրդի ազգային ազատագրական պայքարը օտար նվաճողների դեմ, ինչպես դա եղավ Ավարայրի ճակատամարտում, արաբների, հետագայում թուրք-սելջուկներին օսմանյան հորդանների դեմ մղված պայքարում: Ժամանակի հայ առաքելական եկեղեցու ականավոր հոգեւոր մշակների՝ Սահակ Պարթևի եւ Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ստեղծվեցին հայոց գրերը, բացվեցին դպրոցներ երկրի բազմաթիվ գավառներում: Յայ եկեղեցու ջանքերով է քրիստոնեական հավատին զորավիգ եղել մեր ժողովուրդը՝ պայքարելով օտար աղանդների դեմ: Յայ առաքելական եկեղեցին հսկայական ջանքեր է գործադրել՝ դուրս գալու «տիեզերական» եկեղեցու ոլորտից, թոթափելու նրա ազդեցությունը, դրա հետ միաժամանակ ազատագրվելու Բյուզանդիայի քաղաքական գերիշխանությունից: Յայ առաքելական եկեղեցին 451 թվականին Քաղքեղոնի ժողովում,

համագործակցելով վրացիների, աղվանների եւ ասորիների հետ, առաջ է քաշել միաբնակության ուսմունքը, մերժելով Քաղբեղոնի ժողովի որոշումները: Դրանով իսկ հայ առաքելական եկեղեցին հնարավորություն է ստանում առանձնանալու՝ իբրեւ ինքնուրույն, միաբնակ եկեղեցական կազմակերպություն: Ի դեպ հայ եկեղեցին Առաքելական է կոչվել Քաղբեղոնի ժողովից հետո, 451 թվականից սկսած, հանդես գալով իբրեւ հայ նախարարական պետականության եւ օրենսդրական իշխանության ղեկավար ուժ: Միաժամանակ առիթից օգտվելով հարկ է նշել, որ միջնադարյան Հայաստանում օրենսդրական ակտերը մշակվել եւ հաստատվել են եկեղեցական ժողովի-ներկայացուցիչների կողմից՝ դրա համար կրելով պատասխանատվություն: Դրանք՝ օրենսդրական այդ ակտերը, փաստորեն եկեղեցական գրավոր կանոններ էին, որոնց համահավաք ժողովածուն հայտնի է **«Կանոնագիրք Հայոց»** անունով:

Հայ առաքելական եկեղեցին, իր կապերը խզելով Բյուզանդական եկեղեցուց, նախընտրում է համագործակցել Սասանյանների հետ, որոնք, ի հակադրություն բյուզանդացիների, 6-րդ դարասկզբին (502 թվականին) պաշտոնապես ճանաչել են, հայ առաքելական եկեղեցին՝ որպես ինքնուրույն ազգային հոգեւոր կենտրոն: Դա էլ հնարավորություն է ընձեռնել, որպեսզի հայ առաքելական եկեղեցին 506 թ. Դվինի ժողովում վերջնականապես կապերը խզի քաղբեղոնական եկեղեցուց՝ շարունակելով իր ինքնուրույն գործունեությունը: Ի տարբերություն կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիների, հայ առաքելական եկեղեցին կոչված է **միաբնակ**, որովհետեւ այն ընդունվում է Քրիստոսի մեկ բնույթը: Այդ է պատճառը, որ հայ առաքելական եկեղեցին սկզբունքային պայքար է մղել թե՛ այդ եկեղեցիների եւ թե՛, առհասարակ, տարբեր աղանդների, օտար ազդեցությունների, նրանց քաղաքական ուժերի դեմ՝ միասնական եւ միաձուլյալ պահելով հայ եկեղեցու կալվածքները՝ շարունակելու իր ինքնուրույն ու արտոնյալ վիճակը: Հայ առաքելական եկեղեցու հետեւողականությունը ուներ պատճառը. բանն այն է, որ 13-րդ դարից սկսած եւ հատկապես հետագա 17-18-րդ դարերում, երբ Հայաստանը զգալիորեն թուլացած էր, կաթոլիկ եկեղեցին ձգտում էր իր ազդեցության տակ գցել հայ եկեղեցին: Այդ նասին է վկայում ունիթորների վարած քաղաքականությունը, որի դեմ հայ առաքելական եկեղեցու պայքարը անզիջում ու հետեւողական եղավ եւ դա ոչ միայն ի շահ հայ եկեղեցու, այլեւ հոգեւոր մեր ազգային մշակույթի զարգացման ու նրա գոյատեւման: Այդ ամենից բացի օտար ազդեցությունների դեմ պայքարն ուժեղացնելու եւ հայ եկեղեցու դիրքերն ամրապնդելու նպատակով վանքերին կից բացվում են բազմաթիվ դպրոցներ, նույնիսկ համալսարաններ, ինչպես, օրինակ՝ Գլաձորում, Տաթևում, Գետիկում, Հաղպատում եւ այլուր: Հիմնվում են մատենադարաններ, արվեստանոցներ, ժողովվում ձեռագիր մատյաններ, արվեստի գործեր:

17-րդ դարից սկսած հայ առաքելական եկեղեցու քրիստոնեական ազդեցությունը, հայոց հոգեւոր կենտրոնների դերը ավելի է մեծանում, նույնիսկ այն չափով, որ 19-րդ դարի սկզբին Ռուսաստանի տիրապետության տակ անցած Արեւելյան Հայաստանի եկեղեցու համար **«Պոլոժենիով»** հատուկ իրավունքներ ու արտոնություններ են նախատեսվում:

1918 թվականին ստեղծված Հայաստանի Հանրապետությունը հսկայական ջանքեր գործադրեց հայ եկեղեցու, մեր հոգեւոր կենտրոնների բարգավաճման համար՝ այդ դժվարին պայմաններում զգալի միջոցներ հատկացնելով դրանց վերաշինման ու վերականգնման համար: Սակայն

ինչպես առիթ ունեցանք նշելու, խորհրդային իշխանության տարիներին ոչ միայն վերականգնման ու վերաշինման աշխատանքներ չկատարվեցին, այլևս եղածներն անուշադրության մատնված քայքայվեցին ու փլուզվեցին:

Փլուզվեց նաև մեր հավատքը. կրոնի գաղափարը եւ եկեղեցին հալածվեցին՝ որպես սոցիալիզմի գաղափարական թշնամիներ: Եվ հիմա, երբ վերածնվում է մեր ազգային հոգեւոր կյանքը, երբ մեզ մեր ժողովրդի անասանության հավատն է առաջնորդում, պիտի, ուրեմն, ապավինվենք Հայաստանյազ առաքելական եկեղեցուն, հայոց քրիստոնեական հավատքին, որ դարեր շարունակ մեզ ուժ ու կորով են ներշնչել՝ ապրելու, արարելու եւ գոյատևելու հավիտյանս հավիտենից:

## ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Յ. ՊԱՊՈՅԱՆ

Արդեն շուրջ մեկ տասնամյակ է, ինչ որոշ հեղինակների ջանքերով, գրավոր թե բանավոր, մանուկում թե եթերում պարբերաբար արծարծվում է հին ուղղագրությանը վերադառնալու պահանջը: Այս պահանջի կողմնակիցներին պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի:

Ա. կան գրագետներ, որոնք հարցի պատմությանը ծանոթ չեն կամ քիչ են ծանոթ, այն էլ առավելապես Ռ. Իշխանյանի ռադիո-հեռուստատելույթներից ու հոդվածներից, որոնք, սկսած 1980-ական թթ. վերջերից՝ ընդհուպ մինչև իր մահը, հնչել են եթերում, հեղեղել հանրապետության կենտրոնական եւ ոչ կենտրոնական, նաեւ շրջանային գերեթե բոլոր թերթերի էջերը:

Հարկ ենք համարում նշել, որ Իշխանյանի եւ նրա համախոհների հրապարակումներում առատորեն սփռված են սխալ ու անհիմն, իրականության հետ ոչ մի կապ չունեցող տեսակետներ, որոնց համաձայն՝ իբր 1922 թ. ուղղագրական փոփոխությունը կատարվել է հայ ժողովրդից ու հայ մտավորականներից գաղտնի, «մի երկու հոգու» ( Մ. Աբեղյանի և Պ. Մակինցյանի ) ջանքերով, «այն ծառայել է բուլշևիկներին», ուրեմն բուլշևիկյան ուղղագրություն է, թե Մ. Աբեղյանին Սիբիր աքսորելու սպառնալիքի տակ են ստիպել ներկայացնելու, «դասական ուղղագրությունը արմատապես խախտող նախագծի տարբերակը»-ն այլն:

Ասվածի բնական ու տրամաբանական եզրակացությունն է, ուրեմն, «վերացնել ուղղագրական բռնադատումը»: Այսպես դատում են նաև՝ մինչև 1922 թ. գործող ուղղագրության անծանոթ կամ քաջածանոթ շարքային մտածողները:

Մեր աշխատանքային գործունեության բերումով Երեւանի պետական համալսարանի լսարաններում եւ համալսարանից դուրս երիտասարդության հետ շփվելիս՝ այլեւայլ առիթներով ակնարկել ենք, թե մեզ այսօր ուզում են պարտադրել գրել՝ **տղայ, երեխայ, վրայ, սիրոյ**, բայց արտասանել՝ **տղա, երեխա, վրա, սիրո**, ինչպես որ արտասանում ենք: Պահանջում են վ (ռուս. В) հնչույթը գրել մի դեպքում՝ հենց վ տառով, երկրորդ դեպքում ու տառով,

երրորդ դեպքում և տառով: Նույնիսկ մեկ բառի մեջ նույն եւ միեւնույն վ հնչույթը գրել երկու տարբեր տառերով, ինչպես՝ **հովիւ**, միեւնույն արմատի միեւնույն հնչույթը մեկ դեպքում՝ մի տառով, այլ պարագայում՝ ուրիշ, երրորդ դեպքում՝ երրորդ տառով (հմմտ. թիւ, բայց **թուեր** եւ **թուով** )։ միեւնույն բառածելի մեջ՝ միեւնույն հնչույթը՝ երկու տարբեր տառերով, որոնցից ոչ մեկը արմատի ուղիղ ձեւի մեջ չկա (թիւ - **թուով**)։ միեւնույն **հ** հնչույթը գրել մեկ՝ հենց **հ** տառով, երկրորդ դեպքում՝ **յ**-ով, ինչպես՝ **Յայկ**, **Յովհաննես** (միեւնույն բառի մեջ՝ այս դեպքում էլ երկու տարբեր **հ**-եր՝ **յ** եւ **հ** ):

Բ. Կան գրագետներ ու գիտնականներ էլ, որոնք այս կամ այն չափով ծանոթ լինելով հարցի պատմությանը՝ հին կամ ավանդական կոչված ուղղագրությանը վերադառնալու պահանջը աշխատում են հիմնավորել այլեւայլ «փաստարկներով»՝ փորձելով 1922 թ. ուղղագրական ռեֆորմը չեղյալ համարելու համար ստեղծել նաեւ գիտական հիմնավորում: Այդ «փաստարկները» հիմնականում հանգում են հետեւյալին:

1. «Ահա հայոց **1500-ամյա դասական ուղղագրությունն էլ ազգային կարեւորագույն ավանդույթ է (...)**, մեր ազգային-ավանդական եւ մշակութային անբաժանելի մասը», **որից հրաժարվել չի կարելի**: 2. «1922 թ. հրամանագրումը կատարվել է **հակառակ ամբողջ հայ մտավորականության կամքի, «առանց քննարկման»**, մեկ անհատի կողմից հապճեպորեն կազմված նախագծով, որն էլ հենց փրկեց հեղինակին «Սիբիր քշելուց»: 3. **Նոր ուղղագրությունը ընդունվել է իբրեւ մի օղակ՝** հայկական գրից հրաժարվելու եւ **լատինական այբուբենին անցնելու համար**: 4. **Յայ մտավորականները ժամանակին դեմ են եղել 1922 թ. ռեֆորմին**: 5. «**Ամեն ազգ (...)** պիտի ունենա մեկ միասնական, իր բոլոր զավակների համար պարտադիր ուղղագրություն: Քննեք այս առարկությունները:

1. «1500-ամյա դասական, մաշտոցյան ուղղագրության» հարցը:

1922 թ. մարտի 4-ին՝ այն օրը, երբ ստորագրվեց նոր ուղղագրությունը գործի դնելու որոշումը, աշխարհաբար լեզվի ուղղագրությունը շատ ու շատ էր հեռացել «մաշտոցյան, դասական» ուղղագրությունից, որը անադարտ կերպով գոյություն է ունեցել իր ստեղծման պահին՝ IV դարի վերջին կամ V դարի սկզբին, եւ հետագա մի քանի հարյուրամյակների ընթացքում:

Այսպես, օրինակ՝ IX դարի վերջի ձեռագիր նմուշները համեմատելով ավելի ուշ շրջանի գրավոր աղբյուրների հետ, նկատում ենք հնչյունական զգալի տարբերություններ: Ուղղագրական եւ հնչյունական տարբերություններ են ի հայտ գալիս արդեն XI - XII դարերի ձեռագրերում: Գ. Տեր Մկրտչյանի վկայությամբ՝ XII դարի որոշ ձեռագրերում առհասարակ բացակայում է է տառը. որտեղ պետք է է լիներ, գրված է **ե** (հմմտ. Քրիստոսե, արքանե, ի գեղջե եւ այլն): «Շատ հազվագյուտ դեպքերում, երբեւի գրչի անուշադրությունից, եթե ներս է սպրդում մի ձեռագրում որեւէ բառի մեջ է տառը, այդ դեպքում մյուս ձեռագիրն, անշուշտ, պահած է ունենում նախնականը, նույն բառի մեջ ունենալով «ե» տառը»:

Մեր լեզվի հիշյունական համակարգում եւ քերականական կառուցվածքի մեջ պատմականորեն առաջացած տեղաշարժերը չէին կարող բարեշրջություն չառաջացնել ավանդական ուղղագրության մեջ: Փոփոխությունը վերաբերում էր հատկապես բառասկզբի եւ բառավերջի է տառի ուղղագրությանը: Շեղումը ավանդական ուղղագրությունից այնքան զգալի է, որ Արիստակես գրիչը իր «Վերլուծութիւն բացերեւապես բազմազան բառից եւ բայից հոգնախումբ շարադրութեամբ» աշխատության մեջ հատուկ անդրադառնում է այդ խնդրին եւ մշակում **յ** տառի կիրառման նոր կանոններ



եւ գրքի վերջում, իբրեւ հավելված, ներկայացնում ուղղագրական բառարան կազմված բառերի գրության նոր սկզբունքներով: Դա փաստորեն հայերենի ավանդական ուղղագրության առաջին բարեշրջությունն էր՝ ռեֆորմը (տես Մաշտոցի անվան Մատենադարանի No. 2382, 2521, 3917 եւ 7123 ձեռագրերը. գրքի ճշգրիտ թվականը չենք կարող նշել, քանի որ թվագրված չէ):

Դասական ուղղագրության բարեփոխության այս առաջին փաստը անուղղակիորեն հաստատում է նաեւ ակադեմիկոս Գ. Ջահուկյանը. «Գրաբարի ուղղագրության նորմավորման պահանջ,- գրում է նա-, առաջացել է դեռ միջին դարերում, իբր արդեն նկատելի էին խոսակցական լեզվի՝ գրաբարից ունեցած տարբերությունները: 12-13-րդ դարերում Արիստակեսի, Գեւորգ Սկեւռացու եւ ուրիշների կողմից գրվել եւ հիմնական գծերով լուծվել է գրաբարի ուղղագրության ու կետադրության նորմավորման հարցը»:

Այնպես որ բարեփոխության կամ ռեֆորմի փորձը հին ուղղագրության մեջ արդեն կատարվել են նույնիսկ վաղ միջնադարում:

Չնոռանանք, որ սա միջին հայերենի շրջանն էր՝ մեր լեզվի զարգացման հաջորդ փուլը: Միջին հայերենը գրաբարից զգալիորեն տարբերվում էր թե՛ հնչյունական համակարգով, թե՛ քերականական կառուցվածքով: Եվ միանտություն կլինի կարծել, թե V դարի ուղղագրությունը կարող էր անփոփոխ մնացած լինել վաղ միջնադարից հետո: Բառերի գրության փոփոխությունները ավելի հաճախ են հանդիպում հետագա դարերում: Այսպես՝ Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» գրքի 1174 թ. ձեռագրում (Մատենադարանի No 1890 ձեռագիր) **Օ** տառը բնավ գոյություն չունի (քանի որ այն հենց այդ տարիներին նոր-նոր պետք է մուտք գործեր հայոց այբուբենի մեջ), իսկ 1569 թ. ձեռագրում (No 1920) բոլոր **աւ** տառակապակցությունները անխտիր փոխարինված են **Օ**-ով: Նույնիսկ կան սխալագրություններ. որտեղ **աւ**-ը պետք է պահպանվեր, չի պահպանվել, ներկայացվել է **Օ** տառով, թեւ **աւ** հնչումը, կածկածից վեր է, պետք է պահպանված լիներ: Այսպես՝ առաջին ձեռագրի փառ**աւորաւ**ն, անձ**աւ**ացեաց, **Դաւիթ**, բաւիղ, ծար**աւ** ձեւերը երկրորդ ձեռագրում ստացել են փառ**աօ**րօն, անձ**աօ**ացեաց, **Դօիթ**, բօիղ, ծար**օ**, գրային պատկերը:

Ասել է թե՛ գրիչը կատարել է մեխանիկական աշխատանք. առանց թափանցելու բառի իմաստային կառուցվածքի մեջ, ըստ հետզհետե տարածվող նոր միտումի՝ անենուրեք **աւ**-ը փոխարինել է **օ**-ով, նույնիսկ այնտեղ, որտեղ ակնհայտորեն պետք է արտասանվեր հենց **աւ** տառակապակցությունը (Դ**աւիթ**): Հետագա դարերում ժամանակի պահանջով շարունակվում է ուղղագրական բարեփոխումների գործընթացը՝ թեկուզ եւ տարերայնորեն, երբեմն նաեւ որոշ վրիպումներով:

Ահա թե ինչ փաստեր է արձանագրում նույն ինքը Ստ. Մալխասյանցը՝ արեղյանական ուղղագրության հակառակորդը: Խոսելով **վ** հնչույթը նշագրող երեք տառերի՝ **ու**, **ւ**, **վ**-ի մասին՝ նա գրում է. «Դեռ 10-11-րդ դարերից սկսած՝ թե՛ արձանագրությունների եւ թե՛ գրքերի մեջ պատահում են **վ**-ով գրություններ՝ անգրագետ գրիչներից(Ս. Աբեղյանը, որից վերցված է սույն քաղվածքը, այստեղ կատարում է մի նուրբ «շտկում»՝ «այսինքն՝ **որ նախապաշարված չէին ավանդական ուղղագրությամբ**»- Ա. Պ.)...: Մխիթարյանները դեռ XIX սկզբում, աշխարհաբար գրելու ժամանակ, հետեւում էին այս գրության կերպին...: Սայաթ-Նովայի գիտական հրատարակիչը՝ բժ. Հախվերդյան, կրավորական բոլոր ձեւերը գրում էր «վ»-ով...: Խաչ. Աբովյան «վ» է գործածել բոլոր տեղերում, ուր մենք ավանդական

ուղղագրությամբ «ու» ենք գրում «վ» հնչելիս..., իսկ խորեն Ստեփանեն իր «Հայկական աշխարհում» ավելի արմատական կերպով է վարվել եւ ամեն տեղ, ուր հնչվում է «վ», գրել է «վ»:

Այսպիսով Մ. Աբեղյանը դեռ չէր ծնվել (ծնվել է 1865 թ.), եւ բուլշեւիկներն ու կոմունիստները դեռ հետո, շա՛տ ու շա՛տ հետո պիտի գային պատմության թատերաբեմ, բայց մեր լեզվի բնական զարգացման պահանջների մղումով հայոց անվանի եւ անանուն Այրերը ոչ միայն զբաղվում էին ավանդական ուղղագրության փոփոխությունների հետ կապված սկզբունքների մշակմամբ, այլեւ հաճախ իրենք իսկ գործադրում էին հնչյունական ուղղագրության որոշ սկզբունքներ, այսինքն՝ հեռանալով ավանդական գրությունից՝ էությամբ մոտենում էին Մեծն Մեսրոպ Մաշտոցին: Նրանք յուրովսանն փոփոխություններ (ռեֆորմներ) էին կատարում մաշտոցյան ուղղագրության մեջ՝ դույզն-ինչ չվախենալով «Սիբիր արքորվելուց»:

Սա է պատմական ճշմարտությունը:

Մ. Աբեղյանի մշակած նախագծում չկա մի կետ կամ ենթակետ, որոնց մասին իրենից առաջ ուրիշները կամ իր ժամանակակիցները արտահայտված չլինեին: Նրա նախագծի **որոշ կետեր վաղուց արդեն գործադրվում էին**:

Այս փաստը, իբրեւ մեղադրանք Մ. Աբեղյանի հասցեին, ընդգծում է հենց Ստ. Մալխասյանցը: 1922 թ. ռեֆորմը գործի դրվելուց հետո դրա դեմ նա հանդես է գալիս մի ընդարձակ հոդվածով: Այստեղ նա նշում է, որ ռեֆորմի 3-րդ, 4-րդ եւ 8-րդ կետերը «Աբեղյանին էլ չեն պատկանում, այլ առաջարկված, պաշտպանված ու գործադրված են եղել ուրիշներից»:

Ակամա հիշեցնենք Դրամբյանի մեղադրանքը Գ. Թումանյանին:

Բայց սա՛ չէ էականը, այլ այն, որ, գուցե եւ պարադոքս թվա, Ստ. Մալխասյանցի՝ Մ. Աբեղյանին հատկացված «մեղադրանքի» մեջ ամենից ցայտուն երևում է ո՛չ այլ ինչ, քան հենց վերջինիս՝ **ճշմարտացիությունը**:

Բայց կարդանք Մ. Աբեղյանի պատասխանը այն «մեղադրանքին», թե իբր ռեֆորմի մի քանի կետեր իրեն չեն պատկանում: «Կարծես թե,- գրում է նա,- մեկն ասել է (Ստ. Մալխասյանցին- Ա. Պ.), թե «Աբեղյանին են պատկանում», - ապա ավելացնում. «Կարող եմ Մ[տ]։ Մ [ալխասյանց]-ին ապահովել եւ այն մասին, որ մյուս կետերի նկատմամբ էլ **ոչ մի բան չկա, որ ուրիշներն էլ մտածած չլինեն եւ մասամբ նույնիսկ չգործադրած**»:

Հընթացս հիշատակեմ սոսկ մեկ փաստ: 1922 թ. ռեֆորմից ավելի քան մեկուկես տասնամյակ առաջ Ղ. Աղայանը, առանց դեկրետ ու հրամանի, վ հնչույթի երեք նշանագրերից (ու, ւ, վ) մեկը՝ ու-ն, արդեն պատկերացրել էր: Վ-ի վերածված նախկին ու-ն նա փոխարինել էր ւ-ով: Այսինքն՝ միեւնույն հնչույթը երեք տառերով գրելու փոխարեն՝ մեկ տառով գրելու ճանապարհին կատարեց առաջին քայլը, բայց մնաց կիսաճանապարհին: Փոքր-ինչ ավելի ուշ այս ճանապարհը շարունակեց ո՛չ այլ ոք, քան հենց Ստ. Մալխասյանցը, որի իր «Մի հնչյունին՝ մի գիր» գրքույկում կատարեց երկրորդ վճռական քայլը՝ վ հնչույթն արտահայտող ւ եւ վ տառերից պահելով միայն մեկը՝ վ-ն:

Իսկ Մ. Աբեղյանը 1913 թ. հոկտեմբերի 14-ին էջմիածնում, գրերի գյուտի 1500-ամյակին նւիրված համազգային մեծ հոբելյանի հանդեսի ժամանակ կարդացած զեկուցման մեջ նույն հարցի մասին համեստորեն նշում է. «Ես, ուրեմն, առաջարկում եմ հաշտվել կատարված իրողության հետ»: Այս կետը դեռ հետո՝ 8-9 տարի անց, պետք է մտներ 1922 թ. ուղղագրական ռեֆորմի նախագծի մեջ:

Սա՛ է իրականությունը, որ այս անգամ էլ հիշեցնում է Գ. Թումանյանի պատասխանը Դրամբյանին:

Մ. Աբեղյանն, այսպիսով, ամփոփեց դարերի ընթացքում մաշտոցյան ուղղագրության մեջ կատարված փոփոխությունները, իրենց առաջ, մասնավորապես XIX դարի երկրորդ կեսից մինչև XX դարի սկիզբը հայտնված տեսակետներն ու առաջարկությունները աշխարհաբար լեզվի ուղղագրության մասին, համակարգեց դրանք, գիտականորեն հիմնավորեց յուրաքանչյուր հնչույթի ու հնչյունակապակցության նշանագրության նոր սկզբունքները՝ ըստ հարկի՝ պահելով ավանդույթը, ըստ անհրաժեշտության փոխելով:

2. Երկրորդ կռվանը նոր ուղղագրության դեմ այն է, թե իբր դա ընդունվել է հակառակ **«ամբողջ մտավորականության պահանջի»**, **«գաղտնի կերպով»**, **«առանց քննարկման»**, թե բոլշեիկների պարտադրանքով հապճեպորեն կազմվել է մի նախագիծ, որով հեղինակը հայոց «1500-ամյա ուղղագրությանը», «ազգային 1500 տարվա ավանդույթի» հետ միասին, իբրև «փրկագին» դրել է խորհրդային նորաստեղծ իշխանության զոհասեղանին՝ իր գլուխն ազատելու համար «Սիբիր աքսորվելու» վերաբերյալ ամբոխավարական փուչ կրակոցը մի կողմ թողնենք: Մ. Աբեղյանը այդ նախագիծը ոտքի վրա հապճեպորեն չի կազմել: Մ. Աբեղյանը գիտական ո՛չ մի հարց հապճեպորեն, ոտքի վրա չի լուծել:

Հարցի պատմությունը քիչ թե շատ ծանոթ ամեն ոք գիտե, որ 1922 թ. ռեՖորմից շատ ու շատ ավելի վաղ՝ ուղիղ 30 տարի առաջ՝ 1892 թ. նա արդեն գիրք ուներ գրած ու տպած հայերենի ուղղագրության մասին «Հայոց լեզվի ուղղագրությունը» (բոլշեիկները դեռ 28-29 տարի հետո պետք է գային «պարտադրելու...»): Սրան հաջորդում է 21 տարի հետո՝ 1913 թ. հոկտեմբերին (բոլշեիկների գալուց 7 տարի առաջ) հայ գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանական միստին կարդացված ընդարձակ զեկուցումը, որը նույն թվականին հրատարակվում է «Արարատ» հանդեսի 11 եւ 12 համարներում:

Պատկերացնել է պետք, թե Մ. Աբեղյանի նման ներհուն հետազոտողը 30 տարի շարունակ զբաղվելով նույն՝ հայերենի ուղղագրության հարցով, ինչպիսի՜ խորությամբ, բազմակողմանիությամբ ու միայն իրեն հատուկ բժախնդրությամբ կարող էր ուսումնասիրած լինել այդ ուղղագրության պատմությունը, նրա անցյալ ու ներկա վիճակները: Եվ պատահական չէ, որ հայ գրերի 1500-ամյա համազգային մեծ հոբելյանի հանդիսությունների ժամանակ, հոբելյանական հանձնաժողովի հանձնարարությամբ, զեկուցմամբ հանդես է գալիս հենց ինքը՝ Մ. Աբեղյանը: Ահա այդ զեկուցման սկիզբը. «Հոբելյանական հանձնաժողովը հարմար համարեց հայ գրի այս մեծ հոբելյանին խորհրդակցություն ունենալ մեր ուղղագրության մասին եւ ինձ առաջարկեց ներկայացնել մի զեկուցում, թե արդյոք պե՞տք է եւ կարելի՞ է փոփոխություններ մտցնել մեր ավանդական ուղղագրության մեջ»:

Ապա ամենայն մանրակրկիտությամբ հեղինակը ներկայացնում է այն բոլոր փոփոխությունները, որ կատարվել են «հայերեն բառերը գրի առնելու» պահից սկսած՝ 1500 տարվա ընթացքում եւ հիմնավորում կատարված ու կատարվելիք բոլոր բարեփոխումները, կարճ ասած՝ ներկայացնում գալիք ռեՖորմի նախագիծը՝ իր հիմնական կետերով:

Միթե՞ սա «լայն քննարկում» չէ:

Այսպիսի քննարկումները, մտքերի ու տեսակետների փոխանակությունը, նաեւ՝ վեճերը հետո շարունակվեցին ու շարունակվեցին: Վեճերի հետ շարունակվեց նաեւ ուղղագրական անմիօրինակությունը, անմիակերպությունը: Հին կամ ավանդական ուղղագրության մեջ նոր փոփոխություններ մուծվում են ու մուծվում: Այդպիսի «փոփոխությունը լինում

է եւ լինելու է. կուզե՞ք՝ գիտությամբ համարեք, կուզե՞ք՝ տգիտությամբ,- ասում է Մ. Աբեղյանը:- Չեզոքիւ տեսնում են նորանոր փոփոխություններ, եւ մենք անկարող ենք դրա առաջն առնել»:

Չայաստանում դեռեւս իշխանություն, պետական մարմին չկար, որ ստանձներ այդ գործի կարգավորման խնդրի լուծումը: Անգամ այս դժվարին պայմաններում Մ. Աբեղյանը ուղիներ է որոնում տեղից շարժելու ուղղագրության միօրինակացման ու կանոնարկման հարցը:

Եվ նա դիմում է հոգեւոր իշխանություններին: «Իմ համեստ կարծիքով,- գրում է նա-, հոգեւոր իշխանությունը կարող է միայն գործադրել տալ որեւէ ուղղագրություն իր դպրոցներում»: Իսկ որպէսզի դպրոցներից դուրս եւս գործադրվի որեւէ միասնական ուղղագրություն, որպէսզի բոլոր գրագետները, մամուլը, ընդհանրապէս հասարակությունը «միակերպ ուղղագրություն բանեցնեն, հարկավոր է մի հեղինակավոր խորհուրդ՝ մասնագետներից կազմված, որ լրջությամբ պարապեր այդ խնդրով (...) եւ որոշ լուծում տար ընդունելի կամ մերժելի փոփոխությունների համար»: Այս խոսքերը նա ասել է 1319 թ. հայտնի զեկուցման ժամանակ:

Բայց հոգեւոր իշխանությունները եւս այս հարցը չլուծեցին:

Անցան տարիներ: Վերջապէս ստեղծվեց իշխանություն, թո՛ղ որ խորհրդային, բայց իշխանություն՝ կառավարման իր մարմիններով: Այդ իշխանության ստեղծումից ընդամենը ամիս հետո **Մ. Աբեղյանի նախագիծը նորից դրվում է հասարակական քննարկման**: Բայց ավելի լավ է այս մասին խոսի ինքը՝ նախագծի հեղինակը. «1921 թ. հունվար ամսին Չայաստանի Ս. Խ. Չանրապետության լուսավորության Ժ [ողովրդական] կոմիսար Ա. Յովհաննիսյանի հրավերով Երեւանում բազմամարդ ունկնդիրների առաջ կարդացի մեր ուղղագրության բարեփոխության մասին մի զեկուցում, որից հետո եղավ մտքերի փոխանակություն: Այդ խնդիրը ինձ համար նորություն չէր, որովհետեւ մի նույնպիսի զեկուցում կարդացել էի Էջմիածնում 1913 թ. հայոց գրերի գյուտի մեծ հոբելյանի առթիվ»: Չամեստորեն չի էլ հիշատակում, որ **1913 թվականից 21 տարի առաջ էլ** մի ամբողջ գիրք էր հրատարակել նույն հարցի մասին՝ «Չայոց լեզվի ուղղագրությունը» (Թիֆլիս, 1892): Վերջապէս՝ 1922 թ. մարտի 4-ին Չայաստանի Ժողովրդական Կոմիսարների խորհուրդը հաստատեց Մ. Աբեղյանի նախագիծը եւ գործի դրեց:

Ուրեմն հարցը հանկարծակի չի լուծվել. այն վաղուց հասունացված էր, բայց լուծում չէր գտնում՝ երկրում պետականության բացակայության պատճառով: Նույնիսկ հոգեւոր իշխանությունը, որի վրա ժամանակին հույս էր դրել Մ. Աբեղյանը, չկարողացավ որեւէ քայլ կատարել հարցի լուծման ուղղությամբ:

Մ. Աբեղյանի՝ կառավարությունը ներկայացրած նախագծի համար հիմք էին ծառայել ուղղագրության բարեփոխության մասին տարիների ու տասնամյակների ընթացքում եղած բոլոր արծարծումները, առաջարկությունները, նաեւ սեփական հետազոտությունների արդյունքները: Եվ ստացվեցին բարեփոխված մի այնպիսի ուղղագրություն (նկատի ունենք նաեւ 1940 թ. մասնակի լրացումները **օ** եւ է տառերի մասին), որ արդարացված էր պատմականորեն, մատչելի էր մանկավարժորեն, շահեկան՝ հոգեբանորեն: Այն լիապէս բխում էր մեր նոր լեզվի՝ արեւելյան աշխարհաբարի հնչյունային համակարգի ոգուց, ուներ գիտական հիմնավորում: **Պա սերունդների երկարատեւ ջանքերի արդար պտուղն էր**:

Մ. Աբեղյանը հաշվի էր առել նաեւ՝ ժամանակին արված եւ հետագայում արվելիք դիտողությունն այն մասին, թե **չպետք է անանցնելի խզում լինի հին**

**եւ նոր ուղղագրութիւնների միջեւ:** Նման խզումը կարող էր խոչընդոտել մատենագրության ու մշակույթի յուրացմանը՝ նոր սերնդի կողմից: Ուստի եւ, ընդգծում էր նա, նոր ուղղագրությունը «ընդունելի լինելու համար պետք է շատ բառերի պատկերը չփոխել, եւ բառերի պատկերը շատ չփոխվի»:

Նոր ուղղագրությունը կառուցված է նաեւ այս սկզբունքի հիմունքներով: Հիշենք, որ բաղաձայնների ուղղագրությունը գրեթե մնացել է անփոփոխ: Ասում ենք՝ **գրեթե**, նկատի ունենալով վ հնչույթը արտահայտելու համար նախկինում եղած երեք տառերից, մեկը՝ վ-ն, եւ **հ** հնչույթի նշագրման համար նախկինում կիրառվել **յ** եւ **հ** տառերից միայն մեկը՝ վերջինը ընդունելը: Մնացած բոլոր բաղաձայնների ուղղագրությունը մնացել է անփոփոխ: Սա Մ. Աբեղյանի հիմնական սկզբունքներից մեկն էր: «Բաղաձայնների հին ուղղագրությունն անձեռնմխելի պիտի մնա,- ասում էր նա,- եւ այս ո՛չ թե այն պատճառով, որ այդպես ենք կամենում, այլ նրա համար, որ [...] դա կստեղծի մի նոր «բաբելոնյան խառնակություն»: Եվ եթե մենք ուզում ենք [...], որ արեւմտյան աշխարհաբար իմացողի համար հասկանալի լինի արեւելյան աշխարհաբարը, կամ ընդհակառակն, մենք պետք է պահենք այդ պայմանը, ինչպես որ պահել ենք ցարդ»:

3. Նոր ուղղագրությունից հրաժարվելու կռվաններից մեկն այն է, թե իբր դա **ընդունվել է որպես միջին օղակ՝ հայկական գրից հրաժարվելու եւ լատինական այբուբենին անցնելու ճանապարհին:**

Վերելում արդեն տեսանք, որ նոր՝ կենդանի լեզվի հնչյունական համակարգի եւ քերականական կառուցվածքի պահանջով հին ուղղագրության մեջ կատարվող փոփոխությունները տասնամյակների, նույնիսկ հարյուրամյակների պատմություն ունեն: Եվ 1922 թ. (եւ մասնակիորեն՝ 1940 թ.) ռեՖորմը երկարատեւ այդ փոփոխությունների տրամաբանական ու վերջնական արտահայտությունն էր: Ըստ իշխանական հիշյալ դրույթի՝ ստացվել է, որ երկարատեւ այդ ժամանակաշրջանում ուղղագրության մեջ կատարված եւ 1922 թ. (նաեւ 1940 թ.) վերջնական լուծում ստացած այդ փոփոխությունների մեն ու միակ նպատակը եղել է «լատինատառ հայերենի անցնելը»:

Լատինատառ գրությանն անցնելու վերաբերյալ եզրակացության «մեն ու միակ» հիմքը Հայաստանի այն ժամանակվա լուսժողկոմ Պողոս Մակինցյանի՝ Թիֆլիսում հրատարակվող «Ձարյա Վոստոկա» թերթի 1924 թ. նոյեմբերի 29-ի համարում տպագրվածն է, որտեղ նա խոստովանում է իր **անհիմն տեսակետը** լատինատառ գրին անցնելու մասին:

Բայց դա ի՞նչ առնչություն ունի Մ. Աբեղյանի անձի եւ գործի հետ:

Հիշենք նաեւ, որ ինքը Մ. Աբեղյանը իր «Ուղղագրության ռեՖորմը» (Երևան, 1925) աշխատության մեջ, որպես հետգրություն, զայրույթով է անդրադարձել Պ. Մակինցյանի նշված հոդվածին եւ դատապարտել այն: Ահա թե ինչ է գրում նա. « P. S. Այս գիրքը վեց ամիս առաջ, 1924 թ. մայիսին, արդեն պատրաստ էր եւ տպագրության հանձնված, երբ Թիֆլիսի «Ձարյա Վոստոկա» թերթի մեջ, նույն թվի նոյեմբեր ամսի 29-ի համարում, լույս տեսավ Պ. Մակինցյանի մի հոդվածը, որի մեջ նա առաջարկում է թողնել սահակ-մեսրոպյան տառերը եւ գրել լատիններեն տառերով: [...] Նա հայտնում է, թե ինքն այն ժամանակ իսկապես մի ուրիշ, զաղտնի նպատակ է ունեցել եւ թե ինքը «ո՛չ մի դեպքում ո՛չ միայն ձայն չէր տալ ռեՖորմի համար, այլեւ օրինագիծ չէր մտցնի Կոմիսարների Խորհուրդը, եթե ուղղագրության ռեՖորմը չհամարեր իբրեւ մի աստիճան, որ հեշտացնում է լատիններեն տառերին անցնելը»:

Դատապարտելով Պ. Մակինցյանի գաղտնի մտադրությունը՝ Ս. Աբեղյանը այնուհետև շարունակում է. «Ես կարծում եմ, որ ավելի լավ կլիներ, եթե նախկին լուսժողկոմն (1924 թ. Պ. Մակինցյանն արդեն ազատված էր լուսժողկոմի պարտականություններից- Ա. Ժ.) ուղղագրության դեկրետի սկզբում հենց այն գրած լիներ, ինչ որ ինքն իբր գաղտնի նպատակ ունեցել է, այսինքն՝ լատիներեն տառերին անցնելու նպատակը: Այն ժամանակ գուցե ժողովրդական կոմիսարներից մեկը կամ մյուսը, գուցե եւ մեծամասնությունը ձայն չէր տալ ուղղագրության ռեֆորմին» (խոսքը վերաբերում է 1922 թ. մարտի 4-ին ժողովրդական կոմիսարների հորհրդում քվեարկությամբ հիշյալ որոշումն ընդունելուն):

Մի՞թե կարող է կասկած լինել, որ Ս. Աբեղյանը կգերադասեր ունենալ հին, անմիօրինակ, նոր լեզվի բնավ չհամապատասխանող ուղղագրությունը՝ սահակ-մերոպյան տառերով, քան լատինատառ հայերեն գիր:

Եվ մի՞թե նորօրյա հետադարձ ռեֆորմի ջատագովները շատ են տարբերվում իրենից իսկ՝ Պ. Մակինցյանից՝ քաղաքական-կուսակցական շահարկման առարակա դարձնելով Հայաստանում ապրող ողջ հայ ժողովրդի եւ այդ ժողովուրդը կազմող յուրաքանչյուր անհատի սեփականությունը հանդիսացող ուղղագրությունը:

**4. Մյուս առարկությունն է. հայ մտավորականները ժամանակին դեմ էին 1922 թ. ռեֆորմին:**

Արդեն տեսանք, թե մինչև 1922 թ. հայ մտավորականները ինչ կարծիք ունեին հայ ուղղագրության մեջ բարեփոխումներ կատարելու հարցի վերաբերյալ եւ թե ինչ քայլեր էին ձեռնարկում այդ ուղղությամբ՝ անձամբ մասնակցելով ուղղագրական փոփոխությունների գործընթացին: Ինչ վերաբերում է ռեֆորմից հետո մեր մտավորականների արտահայտած տեսակետներին, ապա պետք է ասել, որ դրանք միանշանակ չէին: Համընդհանուր դրական վերաբերմունքի հետ կային, եւ չէին կարող չլինել, նաեւ դժգոհություններ: Չէ՞ որ ամեն մի նորություն, այսպես թե այնպես, խախտում է ավանդույթը եւ պետք է հանդիպի դիմադրության:

Հետադարձ ռեֆորմի կողմնակիցների հիմնական կռվաններից մեկը մեր ազգային երկու մեծ բանաստեղծների՝ Գ. Թումանյանի եւ Ավ. Իսահակյանի նամակներն են, առաջինը՝ հասցեագրված Պ. Մակինցյանին, երկրորդը՝ Ս. Սարյանին:

Երկու նամակներն էլ պատմական փաստաթղթեր են եւ այդ տեսակետից մեծ արժեք են ներկայացնում: Գ. Թումանյանը 1922 թ. մայիսի 17-ին Հայաստանի լուսժողկոմին է հղել մի նամակ, որով «որպես հայ գրող եւ հայ Գրողների Միության նախագահ» իր «զարմանքն ու բողոքն» է հայտնել, որ «առանց քննության ենթարկելու» Ս. Աբեղյանի առաջարկը՝ «հրամանագրում է ընդունելու»: Սա ասված է 22 թ. ռեֆորմի անմիջական տպավորության տակ եւ հոգեբանորեն միանգամայն հասկանալի է: Բայց նրանք, ովքեր համախոհ են ուզում ունենալ Գ. Թումանյանին, պետք է այնքան ազնվություն ունենան, որ հիշատակեն նրա անվան հետ կապված եւս երկու փաստաթուղթ, որոնցում նա իր շատ որոշակի կարծիքն է հայտնում հայերենի ուղղագրության մեջ կատարվող եւ կատարվելիք փոփոխությունների վերաբերյալ:

Դրանցից առաջինը դեռեւս 1910 թ. գրված մի հոդված է, որտեղ մեծ բանաստեղծը իր կտրուկ բողոքն է հայտնում էջմիածնի հոգեւոր իշխանության դեմ, որը պահանջում էր, որ «**հայոց եկեղեցական ծխական եւ հոգեւոր դպրոցներում ուղղագրությունը լինի հինը, ավանդականը, եւ**

գործադրվեն միայն այն դասագրքերը, որոնք գրված կլինեն **միայն հին ուղղագրությամբ**»:

Նրա կարծիքով՝ չի կարելի «եղքան լուրջ մի գործ կարգադրել միայն հապճեպ տնօրինությունով», քանի որ «ուղղագրությունը գիտություն է, եւ նրա դեմ կարելի է դուրս գալ կամ նրան փոխել միայն գիտությունով: Եվ ուրիշ բան էր, եթե Էջմիածինը գիտնական կամ գրական մարդկանցից կազմած մի կաճառի ձեռքով երկար քննելուց հետո աներ այդ տեսակ կարգադրություն»:

Ասված է շատ հետակ ու մեկին, այսինքն այն, ինչ որ տասներկու տարի հետո պիտի ասեր. **չի կարելի փոխել ուղղագրությունը՝ «առանց քննության ենթարկելու»:**

Թումանյանի հայացքները ճիշտ ըմբռնելու համար նույնքան կարևոր է նրա երկրորդ նամակը՝ նույնպես հղված Պ. Մակինցյանին՝ գրված առաջին նամակից շուրջ երկու ամիս հետո՝ 1922 թ. հուլիսի 22-ին: Գրողը նամակում խոսում է իր առողջական վիճակի, նյութական անբարենպաստ պայմանների, գրական որոշ խնդիրների, իր թարգմանությունների եւ այլնի մասին: Նամակի վերջում հեղինակը գրում է. «Ուղղագրությունը գալով՝ եւ հոտառությունով ասում եմ, որ դա չի անցնելու ամբողջովին. օրինակ ո-ի եւ յ-ի պատմությունը: Ո՛չ թե պետք է հին հնչյունները վերականգնել, այլ մաշվածները դեմ գցել, ինչպես ռուսներն արին: Ո՛չ թե պետք է դժարացնել, այլ պետք է հեշտացնել: Եվ չպետք է եղ խնդրին եղ կերպարանքը տալ, պատվասիրություն ու չեմ իմանում ինչ բաներ կապել հետը»:

Ինչպես դժվար չէ նկատել, այս տողերում այլեւս չկան առաջինի (մայիսի 17-ի նամակին հատուկ) հուզական-զգացական լիցքով դրված խոսքեր, այլ կա **սառն դատողությամբ** գծված շատ որոշակի **ծրագիր՝ նոր ուղղագրության անցնելու վերաբերյալ**: Նույնիսկ նշում է, թե ի՞նչը պետք է մնա, ի՞նչը պետք է փոխել, ի՞նչու, ի՞նչպե՞ս եւ ի՞նչ ուղղությամբ. «ո՛չ թե պետք է դժարացնել, այլ պետք է հեշտացնել»: Կարծեք հենց այսօրվա համար է ասված, ի հեճուկս նոր ուղղագրության նորօրյա հակառակորդների:

Բայց այս նամակը (ոչ միայն նշված տողերը) այլ մի հայեցակետով ավելի եւս կարևոր է, կարելի է ասել՝ անզնահատելի փաստաթուղթ է, որի մեջ ո՛չ միայն հավատարմորեն արտացոլված է Զ. Թումանյանի՝ 1922 թ. ուղղագրական ռեֆորմի ըմբռնումը, այլեւ մարգարեաբար գուշակված՝ 18 տարի հետո՝ 1940 թ. կատարվելիք մասնակի բարեփոխումների նախագիծը, ուրիշ կերպ ասած՝ **նրանում երևում է մեր այսօրվա ուղղագրության հայելային պատկերը**:

Այս նամակի մասին ահա թե ինչ է գրում մեր անվանի գիտնականներից մեկը՝ Էդ. Ջրբաշյանը. «Բարեբախտաբար, մենք հնարավորություն ունենք հստակ պատասխան տալու այն հարցին, թե 1922 թ. ռեֆորմի կետերից Թումանյանը ո՞րն է ընդունում եւ ո՞րը մերժում, ինչպես էր նա պատկերացնում մեր ապագա համազգային ուղղագրությունը: Այդ հարցերի պատասխանը տալիս է 1922 թ. հուլիսի 22-ին գրած նույն նամակը Մակինցյանին: Ինչքան էլ զարմանալի թվա, 12 էջից բաղկացած եւ շատ հստակ ձեռագրով շարադրված այդ նամակը չի գրված ո՛չ Թումանյանի համար այնքան սովոր գրաբարյան ուղղագրությամբ (...), եւ ոչ էլ 1922 թ. ռեֆորմի սկզբունքներով, որոնք արդեն սկսել էին գործադրվել մամուլում: Նամակը գրված է մի ուղղագրությամբ, **որը բացարձակորեն համընկնում է 1940 թ. սահմանված սկզբունքներին**: Ամենայն բժախնդրությամբ զննելով նամակի ինքնագիրը, չենք գտնի ո՛չ մի շեղում այսօր մեր կիրացած ուղղագրությունից: [...] Զ. Թումանյանը Պ. Մակինցյանի միջոցով կարծեք ցանկացել է հուշել, թե ինչպիսին պետք է լինի

ժամանակակից հայերենի ուղղագրությունը: Դա, կարելի է ասել, թունանյանի ուղղագրական կտակն էր»:

Թող ներվի ծավալուն քաղվածքը, բայց այնքան դիպուկ է ասված ու գիտական բանաձեւումով, որ թույլ չտվեցինք մեզ կրճատ շարադրել միտքը:

Անշուշտ իրավացի է էդ. Ջրբաշյանը, երբ ասում է, որ թունանյանի այս «կատկը» հրապարակելուց հետո նոր ուղղագրության հակառակորդները կարող են առարկել, թե նա սխալվել է, անսխալական մարդ չկա: «Բայց այդ դեպքում, խոսքը Ռ. Իշխանյանին, շարունակում է էդ. Ջրբաշյանը,- թող մեկընդմիջտ հանգիստ թողնի թունանյանին եւ նրան չդարձնի իր «դաշնակիցը»:

Ավ. Իսահակյանի նամակը Մ. Սարյանին: 1924 թ. նոյեմբերի 12-ին Ավ. Իսահակյանը Վենետիկից մի նամակ է գրում Մ. Սարյանին. նրանում կան այդպիսի տողեր. «Ամեն բան լավ է գնում Հայաստանում (Երեւանից եկած թերթերը կարդում են), միայն մի բան գեշ է- ուղղագրությունը, աշխատեցեք փոխել»:

Հիշենք, որ այդ տարիներին Ավ. Իսահակյանը արտասահմանում էր եւ այնքան էլ իրակեզ չէր հայրենիքում կատարվող իրադարձություններին: Տեղեկություններ ստանում էր հիմնականում կողմնակի աղբյուրներից՝ նամակներից, մամուլից եւ այլն:

Բայր ահա թե ինչ է գրում նա 1944 թ.՝ հայրենիք վերադառնալուց հետո, «Մանուկ Աբեղյան: Ի՞նչ էր մեզ համար նա- հայկական ավանդույթների մարմնացում. գիտական՝ բառիս ամենախորին իմաստով՝ անվախ, աննախապաշար, անկեղծ, վառ հայրենասեր՝ լի հավատով հայ ժողովրդի լավագույն ապագայի հանդեպ, սկզբունքի, աշխատանքի եւ գործի հսկա, պատկառելի ուսուցիչ, սերունդների անձնվեր դաստիարակիչ» (քաղվածքն ըստ էդ. Ջրբաշյանի հիշված հոդվածի):

Այս է Ավ. Իսահակյանի կարծիքը Մ. Աբեղյանի եւ նրա գործի մասին:

Նոր ուղղագրության հակառակորդները Ե. Չարենցին էլ են փորձում դարձնել իրենց «դաշնակիցը»:

Այս առնչությամբ արժե հիշատակել եւս մի փաստ: 1932 թ. Հայաստանի Լուսժողկոմատը կրկին անդրադառնում է ուղղագրության հարցին: Գրողների Միությունում կազմակարգվում է քննարկում: Ձեկուցմամբ հանդես է գալիս լուսժողկոմ Դր. Սիմոնյանը: Ձեկուցումից հետո մտքերի փոխանակմանը մասնակցում են նաեւ Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Մ. Մազմանյանը, որոնք արեղյանական ուղղագրությունը համարում են մեր «**ազգային նվաճումներից մեկը**» եւ առաջարկում շտկել 1922 թ. նախագծի «չնչին թերությունները», որոնք էլ հենց վերացվեցին 1940 թ. մասնակի ռեֆորմով»:

5. Նոր ուղղագրությունից բռնի հրաժարվելու օգտին հիշվում է նաեւ հետեւեալ կովանը. «Ամեն ազգ պիտի ունենա **մեկ միասնական, իր բոլոր զավակների համար պարտադիր ուղղագրություն**»:

Ինչպես հայտնի է, նախկին Խորհրդային Միության նախկին հանրապետություններում եղած հայկական գաղթօջախներում, որոնք այժմ արդեն դարձել են «արտաքին սփյուռք», գործում էր եւ գործում է նոր ուղղագրությունը: Նախկինում «արտաքին» կոչված սփյուռքում, մեկ-երկու գաղթօջախից բացի, կիրառվում էր եւ կիրառվում է հին ուղղագրությունը: Անշուշտ, **ամբողջ ազգի համար մեկ ուղղագրություն** ունենալու պահանջը ցանկալի, երազանք է, բայց, ցավոք, դրա իրականացման համար չկա հող: Շատերը միասնաբար կարծում են, որ եթե ստեղծվի մեկ միասնական



ուղղագրություն Չայաստանում եւ հայկական սփյուռքում, դա վճռորոշ քայլ կլինի նաեւ **լեզվի միասնականացման** ճանապարհին:

Դեռեւս ոչ վաղ անցյալում XIX դարի կեսերին, երբ վերջնականապես ձեւավորվում էր աշխարհաբարը, նրա երկու ճյուղավորումների առկայությանը արդեն պատմական փաստ էր: Զենց այդ շրջանից սկսած՝ արեւելահայ եւ արեւմտահայ մտավորականները, հասարակական-քաղաքական գործիչները բազմիցս փորձեր են ձեռնարկել մեր լեզվի երկու գրական ճյուղերը մոտեցնելու իրար: Ապարդյուն ջանքեր էին դրանք: Այդ երկու ճյուղերի համար միակ ընդհանուրը թերեւս բառապաշար է (չնչին բացառությամբ), իսկ հիշյունական համակարգի մեջ եւ քերականական կառուցվածքներում, կարելի է ասել, ավելի շատ են տարբերությունները, քան ընդհանրությունները, թեեւ երկուսն էլ պատկանում են միեւնույն հայրենիքում եւ արտերկրում բնակվող հայ ժողովրդին: Զայերենի երկու գրական արտահայտությունները մեկ լեզվի մեջ միավորելու ձգտումը կամ տենչը ցնորք է: Պատմությանը դեռեւս հայտնի չէ թեկուզ եւ մեկ հատիկ մնամ օրինակ:

Զայտնին այն է, որ լեզուները կարող են միաձուլվել սոսկ **մեկ եղանակով՝ մեկը մյուսի մեջ ձուլվելով**, այսինքն՝ **մեկի վերջացումով**:

Լեզվաբանության պատմությունը գիտե այդպիսի փաստեր՝ որքան ասե՛ք:

Միավորումը սա՛ է: Ուրիշ ճանապարհ չկա՛, չի՛ եղել եւ չի՛ լինելու:

Եվ թող զարմանալի չթվա, որ այսօր էլ կան հենց սրան ձգտող մարդիկ, որոնք ուղղագրության միասնականացման եւ գրական լեզվի երկու ճյուղերի մերձեցման քողի տակ բնավ էլ դեմ չեն վերացնելու այդ լեզվի ճյուղերից մեկը՝ պահելով մյուսը, եւ հասկանալի է, թե ո՛րը:

Զարց է առաջանում, թե **ինչո՞ւ պետք է այդ երկու գրական լեզվաճյուղերը միաձուլվեն մեկի մեջ**: Սնան հարցադրումն իսկ զուրկ է գիտական հիմնից: Զէ՞ որ դրանք մեր հարստությունն են, մեկ եւ նույն ժողովրդի երկու հայրենաբնակ եւ ոչ հարենաբնակ մասերի ընդհանուր ու անկապտելի հարստությունը: Միթե՞ արեւելահայ կամ հայաստանաբնակ հատվածի սեփականությունը չէ արեւմտահայերենով ստեղծված ողջ գրական ժառանգությունը եւ հակառակը:

Վերջապես, դրանք մեր լեզվի երկու անթառամ «ծաղիկներն են» (Ստ. Նազարյան), ուստի եւ երկուսն էլ պետք է խնամենք ու պահպանենք, եւ ոչ թե «միասնականացման» կոչի շղարշի տակ մեկը նսեմացնենք կամ չորացնենք՝ մյուսը պահելու համար:

Իսկ **ինչո՞ւ միասնականացման** կողմնակիցները չեն փորձում «հայերենի ուղղագրության միասնականացման» հարցը լուծել **արեւմտահայերենի ուղղագրությունը փոխելով**: Զէ՞ որ այնտեղ միակերպ ուղղագրություն առհասարակ չկա: Թող ջանքեր գործադրեն գոնե արեւմտահայերենի ուղղագրությունը միասնական հունի մեջ դնելու, միակերպ դարձնելու: Ըստ որում, սփյուռքում եւս կան մտավորականներ, որոնք, նախապաշարված չլինելով սնտի գաղափարներով, ճիշտ են գնահատում 1922 եւ 1940 թթ. ուղղագրական բարեփոխումները: Նրանցից մեկն է դոկտոր Ռ. Ճեպեճյանը, որի կարծիքով՝ «Մանուկ Աբեղյան մեսրոպյան է հարյուր տոկոսով»:

Նկատի ունի նոր՝ 1922 եւ 1940 թթ. ռեՖորմների իբրեւ հիմք ծառայած՝ հնչյունային ուղղագրության սկզբունքը, որ նաեւ Մաշտոցի սկզբունքն էր:

Ամփոփենք: Վերը տեսանք, որ հին ուղղագրության վերադառնալու կողմնակիցների կռվաններից մեկն այն էր, որ իբր 1922 թ. ուղղագրական

բարեփոխումը կատարվել է առանց «լայն քննարկման»: Այդպիսի քննարկում, ինչպես արդեն տեսանք, եղել է:

Այս պահին կրկին պետք է խոսենք «լայն քննարկման» մասին, բայց այսօրվա տեսանկյունով:

Արդեն քանի՛-քանի՛ տարի է (ո՛չ թե մեկ կամ երկու տարի), որ հայերենի ուղղագրության հարցը **քննարկվում է ամենալայն կերպով**:

Հանրապետության գրեթե բոլոր բուհերի հայագիտական եւ ընդհանրապես լեզուների ամբիոնները, Յ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը, նախագահությունը, նույն ակադեմիայի հասարակագիտական այլեւայլ ինստիտուտները, ուրիշ բազմաթիվ հաստատություններ **քննարկել ու քննարկել են** այս հարցը եւ միանշանակ որոշում կայացրել՝ **մերժել ամեն մի ոտնձգություն արդի հայ ուղղագրության դեմ**: Շատ ու շատ որոշումներ անհրաժեշտ հիմնավորումներով, ուղարկվել են կառավարական բարձրագույն ատյաններ: Մամուլում, ընդհանրապես զանգվածային լրատվության միջոցներով, արտահայտվել են հայագիտական մտքի գրեթե բոլոր նշանավոր դեմքերը՝ Գ. Ջուհանյանը, Էդ Ջրբաշյանը, Ս. Աբրահամյանը, Հ. Բարսեղյանը, Ալ. Մարգարյանը, Մ. Ասատրյանը, Պ. Շարաբխանյանը, Լ. Հախվերդյանը եւ շատ ուրիշներ: Վերջապես՝ Հանրապետության ողջ ուսուցչությունը տազնապում է նոր ուղղագրությունը փոխելու վտանգից:

Բայց այս բոլորը ո՞նանց, այդ թվում՝ նաեւ պաշտոնատար որոշ անձանց համար հնչում է՝ իբրեւ «ձայն բարբառո հանապատի»: Սակայն հայոց լեզուն եւ նրա ուղղագրությունը ազգային սեփականություն են, բովանդակ հայոց ազգի սեփականությունը եւ ո՛չ թե սեփականաշնորհված ինչ-որ բանջարանոց, որտեղ **ցանկացողը իր բակլան բարեհաճի ցանել իր ուզածին պես՝ հում թե խաշած...**